ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2025թ. № ***124*** – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի արտահերթ նիստի օրակարգը.

1)«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին

2)«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

3)«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին

4)«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

5)«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
Ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2025թ. № ***125*** - Ա

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ստեղծել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Սպիտակ

1. Ընդհանուր դրույթներ

1. «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ Կազմակերպություն/ շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ենթակայության կազմակերպություն է: Կազմակերպությունը ստեղծվել է Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 125-Ա որոշումով:

2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքն է /այսուհետև՝ Հիմնադիր/ :

3. Կազմակերպությունն իր հիմնական գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Կազմակերպության լրիվ անվանումն է՝ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շահումյան փողոց 7, փոստային դասիչը՝ 1801:

2. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները

7. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն օրենքով և այլ իրավական ակտերով Հիմնադրին վերապահված լիազորությունների առավել օպերատիվ և արդյունավետ իրականացմանն ուղղված աշխատանքների իրագործումն է:

8. Կազմակերպության խնդիրներն են.

ա) Սպիտակ համայնքի աղբահանության իրականացումը, այդ թվում՝ Սպիտակ համայնքի ենթակայության ճանապարհների, անձրևաջրատար առուների Սպիտակի քաղաքային զբոսայգու մաքրումից առաջացած աղբի տեղափոխումը տեխնիկայով,

բ) Սպիտակ համայնքի կողմից սպասարկվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նորոգումը և վերանորոգումը,

գ) Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության համակարգերի սպասարկումը և պահպանումը,

դ) Սպիտակ համայնքի ենթակայության ճանապարհների՝ մեքենայով ձյան մաքրման և աղի ու ավազի ցանման աշխատանքների իրականացումը,

ե) Սպիտակ համայնքի ենթակայության ասֆալտապատ ճանապարհների գծանշումը,

զ) Սպիտակ համայնքի ենթակայության գրունտային ճանապարհների հարթեցումը,

է) Սպիտակ համայնքի ենթակայության ասֆալտապատ ճանապարհների լվացումը,

ը) Սպիտակ համայնքին պատկանող ծառերի, թփերի, ծաղիկների և սիզամարգերի ջրումը,

թ) օրենքով սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացումը:

3. Կազմակերպության իրավունակությունը

9. Կազմակերպության իրավունակությունը ծագում է դրա պետական գրանցում ստանալու պահից:

10. Կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Սպիտակ համայնքի ավագանու որոշումներով:

11. Կազմակերպությունը ունի հայերեն անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

12. Կազմակերպությունը կարող է իր անունից.

ա) ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ,

բ) դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ:

13. Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, ինչպես նաև Սպիտակ համայնքի ավագանու որոշմամբ:

14. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ,

բ) ապահովել կազմակերպության փաստաթղթերի (կազմակերպության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթեր, կազմակերպության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների ակտեր, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր), կնիքի, իրեն ամրագրված գույքի պահպանումը:

4. Կազմակերպության կառավարման մարմինները, դրանց կազմը և լիազորությունները

15. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Սպիտակ համայնքի ավագանին, Սպիտակ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

16. Սպիտակ համայնքի ավագանին ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

17. Սպիտակ համայնքի ավագանու բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

բ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ Հիմնադրին պատկանող գույքի կազմի հաստատումը.

գ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

դ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

ե) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

զ) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

է) օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

18. Սպիտակ համայնքի ղեկավարը՝

ա) իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրավական ակտերը,

դ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ,

զ) Կազմակերպության տնօրենին տալիս է հանձնարարականներ,

է) իրականացնում է օրենքով, Սպիտակ համայնքի ավագանու որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

19. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ տնօրենը, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20" Կազմակերպության տնօրենը օրենքով, Սպիտակ համայնքի ավագանու և Սպիտակ համայնքի ղեկավարի իրավական ակտերով, Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Սպիտակ համայնքի ավագանու և Սպիտակ համայնքի ղեկավարի իրավական ակտերի, Կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

21. Կազմակերպության տնօրենը գործում է սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով և Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների համաձայն:

Հանձնարարականներում կարող են սահմանվել տնօրենի այլ իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն և փոխհարաբերությունները կազմակերպության Հիմնադրի ու կոլեկտիվի հետ և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կհամարի Սպիտակ համայնքի ղեկավարը:

22. Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ) օրենսդրությամբ, Սպիտակ համայնքի ավագանու որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե) բացում է հաշիվներ բանկում,

զ) օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

է) իրականացնում է օրենսդրությամբ չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

23. Հիմնադրի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանը իրավասու է Կազմակերպության տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա ներկայացնել կազմակերպության շահերը Հայաստանի Հանրապետության դատարաններում:

5. Կազմակերպության սեփականության ձևավորման և տնօրինման, տիրապետման և օգտագործման կարգը

24. Կազմակերպությունն օրենքի սահմաններում, իր կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

25. Կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

26. Կազմակերպության գույքային իրավունքների օբյեկտներն են՝

ա) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները,

բ) ախատանքները և ծառայությունները,

գ) տեղեկատվությունը,

դ) ոչ նյութական բարիքները:

27. Կազմակերպությանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել կազմակերպությանը: Կազմակերպությանը պատկանող գույքի թիվն ու արժեքը չի սահմանափակվում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հիմնադրի կողմից հատկացված ֆինանսական միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ գործունեությունից:

6. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

28. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Սպիտակ համայնքի ավագանու որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29. Կազմակերպության գործունեությունը կարող է դադարել միայն Սպիտակ համայնքի ավագանու որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

30. Սպիտակ համայնքի ավագանին Կազմակերպության գործունեության դադարման մասին որոշում ընդունելուց հետո նշանակում է լուծարման հանձնաժողով, սահմանում է լուծարման կարգն ու ժամկետներն: Կազմակերպության լուծարման ժամկետը չի կարող երկու ամսից պակաս լինել:

31. Կազմակերպության գործունեությունը դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2025թ. № ***126*** - Ա

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
Ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ավագանու
2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 126-Ա որոշման

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎՏՈՊԱՐԿ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»
համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատողների քանակը՝ 34
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	***Հաստիքային միավորները***	***Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)***	***Ծանոթություն***
Տնօրեն	1	260 000	
Հաշվապահ	1	180 000	
Գործավար-օպերատոր	1	150 000	
Տնտեսվար	1	170 000	
Պահեստապետ	1	170 000	
Էլեկտրիկ	1	180 000	
Վարորդ	3	160 000	
Տրակտորիստ-մեխանիզատոր	2	200 000	
Ավտոլվացող	1	150 000	
Պահակ	4	110 000	
Ավտոմեխանիկ	1	150 000	
Տեխսպասարկման վարորդ	1	200 000	
Աղբատարի վարորդ	6	200 000	հավելավճար ամսական դրույքաչափի 30%-ի չափով
Աղբատարի բանվոր	6	170 000	հավելավճար ամսական դրույքաչափի 30%-ի չափով
Հատուկ համակցված մեքենայի վարորդ	1	190 000	
Ավտոաշտարակի վարորդ	2	190 000	
Եռակցող	1	150 000	
ԸՆԴԱՄԵՆԸ՝	***34***	***6 536 000***	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2025թ. № ***127*** - Ա

«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ստեղծել «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Սպիտակ

1. Ընդհանուր դրույթներ

1. «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ Կազմակերպություն/ շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ենթակայության կազմակերպություն է: Կազմակերպությունը ստեղծվել է Սպիտակ համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 127-Ա որոշումով:

2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքն է /այսուհետև՝ Հիմնադիր/ :

3. Կազմակերպությունն իր հիմնական գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Կազմակերպության լրիվ անվանումն է՝ «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շահումյան փողոց 7, փոստային դասիչը՝ 1801:

2. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները

7. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն օրենքով և այլ իրավական ակտերով Հիմնադրին վերապահված լիազորությունների առավել օպերատիվ և արդյունավետ իրականացմանն ուղղված աշխատանքների իրագործումն է:

8. Կազմակերպության խնդիրներն են.

ա) բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,

բ) Սպիտակ համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների համար սահմանված տեղական վճարների գանձումը,

գ) Սպիտակ քաղաքում ինքնակամ շինարարության դեպքերը կանխելու ուղղությամբ հիմնադրի կողմից սահմանված միջոցների կիրառումը,

դ) համատիրությունների կազմավորման աջակցումը,

ե) քաղաքացիների հաշվառման աշխատանքների կազմակերպումը և իր իրավասության սահմաններում համապատասխան տեղեկանքների հատկացումը,

զ) Սպիտակ համայնքի բնակավայրերի զարգացմանն ուղղված ընթացիկ և հեռանկարային ծրագրերի մշակումը,

է) Սպիտակ համայնքի բնակավայրերում հակահրդեհային և հիգիենիկ համաճարակային կանոնների պահպանման նկատմամբ իրավասու մարմինների կողմից հսկողություն իրականացմանն աջակցումը,

ը) Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպմանն աջակցումը,

թ) Սպիտակ համայնքի «Կայուն էներգետիկ զարգացման ծրագրի» իրականացմանը, էներգախնայողությանը և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությանն ուղղված աշխատանքներին աջակցությունը,

ժ) բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությանը նպաստող վերանորոգման աշխատանքներին աջակցելու նպատակով վարկային միջոցների ներգրավում և հիմնադրի թույլտվությամբ վարկային պայմանագրի կնքումը,

ի) բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն օժանդակելու նպատակով բնակարանների սեփականատերերի հետ համաձայնագրերի կնքումը,

լ) բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությանը նպաստող շինվերանորոգման աշխատանքերի իրականացման համար սեփականատերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված վարձավճարի գանձումը,

խ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստազորային պատրաստության միջոցառումների և զորահավաքային զորակոչի իրականացման աջակցումը,

զորահավաքային նախապատրաստության շրջանակներում և զորահավաքի ժամանակ զինվորական կոմիսարիատներին զորահավաքային խնդիրների լուծման օժանդակումը,

զորահավաքի ժամանակ զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցումը:

ծ) Սպիտակ համայնքի ենթակայության՝ Սպիտակ համայնքի անձրևաջրատար առուների, քաղաքային զբոսայգու ջրավազանի, քաղաքի ճանապարհների և մայթերի մաքրումը (ավլումը),

կ) Սպիտակ քաղաքի մայթերի, աստիճանների, Ս. Ավետիսյանի հրապարակի, հուշարձանների տարածքի, Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի բակի, ավտոկանգառների, Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների գերեզմանների՝ ձեռքով ձյան մաքրումը,

հ) ծառերի և թփերի էտումը, սիզամարգերի խուզումը, մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքների իրականացումը,

ձ) ըստ անհրաժեշտության Սպիտակ համայնքի կանաչապատումը,

ղ) օրենքով սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացումը:

3. Կազմակերպության իրավունակությունը

9. Կազմակերպության իրավունակությունը ծագում է դրա պետական գրանցում ստանալու պահից:

10. Կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Սպիտակ համայնքի ավագանու որոշումներով:

11. Կազմակերպությունը ունի հայերեն անվանմամբ կլոր կնիք: Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

12. Կազմակերպությունը կարող է իր անունից.

ա) ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ,

բ) դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ:

13. Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, ինչպես նաև Սպիտակ համայնքի ավագանու որոշմամբ:

14. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ,

բ) ապահովել կազմակերպության փաստաթղթերի (կազմակերպության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթեր, կազմակերպության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների ակտեր, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր), կնիքի, իրեն ամրագրված գույքի պահպանումը:

4. Կազմակերպության կառավարման մարմինները, դրանց կազմը և լիազորությունները

15. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Սպիտակ համայնքի ավագանին, Սպիտակ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

16. Սպիտակ համայնքի ավագանին ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

17. Սպիտակ համայնքի ավագանու բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

բ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ Հիմնադրին պատկանող գույքի կազմի հաստատումը.

գ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

դ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

ե) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

զ) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

է) օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

18. Սպիտակ համայնքի ղեկավարը՝

ա) իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրավական ակտերը,

դ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ,

զ) Կազմակերպության տնօրենին տալիս է հանձնարարականներ,

է) իրականացնում է օրենքով, Սպիտակ համայնքի ավագանու որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

19. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ տնօրենը, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20" Կազմակերպության տնօրենը օրենքով, Սպիտակ համայնքի ավագանու և Սպիտակ համայնքի ղեկավարի իրավական ակտերով, Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Սպիտակ համայնքի ավագանու և Սպիտակ համայնքի ղեկավարի իրավական ակտերի, Կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

21. Կազմակերպության տնօրենը գործում է սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով և Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների համաձայն:

Հանձնարարականներում կարող են սահմանվել տնօրենի այլ իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն և փոխհարաբերությունները կազմակերպության Հիմնադրի ու կոլեկտիվի հետ և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կհամարի Սպիտակ համայնքի ղեկավարը:

22. Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ) օրենսդրությամբ, Սպիտակ համայնքի ավագանու որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե) բացում է հաշիվներ բանկում,

զ) օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

է) իրականացնում է օրենսդրությամբ չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

23. Հիմնադրի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանը իրավասու է Կազմակերպության տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա ներկայացնել կազմակերպության շահերը Հայաստանի Հանրապետության դատարաններում:

5. Կազմակերպության սեփականության ձևավորման և տնօրինման, տիրապետման և օգտագործման կարգը

24. Կազմակերպությունն օրենքի սահմաններում, իր կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

25. Կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

26. Կազմակերպության գույքային իրավունքների օբյեկտներն են՝

ա) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները,

բ) ախատանքները և ծառայությունները,

գ) տեղեկատվությունը,

դ) ոչ նյութական բարիքները:

27. Կազմակերպությանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել կազմակերպությանը: Կազմակերպությանը պատկանող գույքի թիվն ու արժեքը չի սահմանափակվում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հիմնադրի կողմից հատկացված ֆինանսական միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ գործունեությունից:

6. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

28. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Սպիտակ համայնքի ավագանու որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29. Կազմակերպության գործունեությունը կարող է դադարել միայն Սպիտակ համայնքի ավագանու որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

30. Սպիտակ համայնքի ավագանին Կազմակերպության գործունեության դադարման մասին որոշում ընդունելուց հետո նշանակում է լուծարման հանձնաժողով, սահմանում է լուծարման կարգն ու ժամկետներն: Կազմակերպության լուծարման ժամկետը չի կարող երկու ամսից պակաս լինել:

31. Կազմակերպության գործունեությունը դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2025թ. № ***128*** - Ա

«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ավագանու
2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 128-Ա որոշման

«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատողների քանակը՝ 33
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	***Հաստիքային միավորները***	***Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)***	***Ծանոթություն***
Տնօրեն	1	220 000	
Տնօրենի տեղակալ	1	200 000	
Հաշվապահ	1	160 000	
Թաղամասերում լիազոր ներկայացուցիչ	6	160 000	
Գործավար	1	150 000	
Տնտեսվար	1	170 000	
Աշխատանքները համակարգող	1	160 000	
Հյուսն	1	150 000	
Փականագործ	1	150 000	
Եռակցող	1	150 000	
Բանվոր	7	150 000	
Հավաքարար	9	150 000	
Այլընտրանքային աշխատանքային ծառայող /բանվոր/	2	Դրամական բավարարումը՝ օրենքով սահմանված կարգով և չափով	
ԸՆԴԱՄԵՆԸ՝	***33***	***4 870 000***	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հոկտեմբերի 2025թ. № ***129*** – Ա

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 25-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Լուծարել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

2. Ստեղծել կազմակերպության լուծարման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Սպարտակ Ափուջանյան - «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Հանձնաժողովի անդամներ՝

Հայկ Սիսակյան – Սպիտակ համայնքի ավագանու անդամ

Կարինե Մաշակարյան - «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ

Թագուհի Շուշանյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Նորայր Յարմալոյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Երեմ Գրիգորյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ

Լուսինե Օհանյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ

3.Կազմակերպությունը լուծարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպության պարտատերերի կողմից պահանջ ներկայացնելու ժամկետ սահմանել 2025 թվականի դեկտեմբերի 19-ը ներառյալ: Կազմակերպության պարտատերերը կարող են իրենց պահանջները ներկայացնել կազմակերպության իրավաբանական հասցեով գրավոր առաքված գրությամբ:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ գրառելու խնդրանքով:

5.Սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպության լուծարման վերաբերյալ հայտարարություն հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքում:

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Սպիտակ